568

727
ch-28

Ալբոմ լուսահիմնարկների տիպական...

ալ

43

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

Հ. Ս. Խ. Հ.

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ԱԼԲՈՄ

## ԼՈՒՍՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԻՊԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

2004

ՅԵՐԵՎԱՆ — 1927 Թ.

727
-28

27
X-28



# Գյուղական դպրոցի շենքը։

1. Նրա դերն ու նշանակությունը.— Գյուղի կենտրոնական շենքը պետք է լինի գյուղդպրոցը, ի հարկե, վոչ թե իր արտաքին դիրքով, այլ իր խնամքով-գաղափարով։ Գյուղդպրոցական շենքը թե ներքուստ, իր բովանդակությամբ, և թե արտաքինով պետք է լինի լուսավորություն սփռող մի որինակելի հիմնարկ։ Այդ անհրաժեշտ է մանավանդ հայ գյուղի դպրոցի համար, վորպեսզի գեղջուկը առիթ ունենա գեթ ծանոթանալու նոր շենքեր կառուցելու ձևի հետ։

2. Դիրքն ու հարմարությունները.— Դպրոցական շենքի տեղը պետք է անպայման առանձնացած լինի. շրջապատը մաքուր, օդը հարուստ, անապակ, լույսառատ։ Հնարավորապես դպրոցը պետք է հեռու լինի փողոցներից (փոշուց), ծխիծներից, գերեզմաններից, հիվանդանոցներից, աղմուկից, և այլն։ Պետք է խուսափել նմանապես ջրերից և առհասարակ սպվերախիր վայրերից։ Գյուղի ամենահարմար դիրքով, ըստ հնարավորության լայն հորիզոն ունեցող՝ բաց և բարձր տեղը պետք է հատկացնել դպրոցական շենքին։ Գյուղ-դպրոցը բնակավայրերից վոչ պակաս քան 20 սաժեն հեռավորություն պետք է ունենա, վորպիսի հանգամանքը վոչ միայն նպաստում է դասարանների լուսավորությանը, այլ և շենքն ապահովում է հրդեհներից, կեղտից, կանական պատահարներից, և այլն։

Դպրոցական շենքի տեղն ընտրելիս մեծ ուշադրություն պետք է դարձնել հողի տեսակի վրա - շենքի լավագույն հիմքն է համարվում քարայինը, խճային կամ ավազային չոր վայրերը։

Շենքի հիմքը խոշոր նշանակություն ունի, ուստի անհրաժեշտ է, վոր հողը տեխնիքապես, մանրամասն ուսումնասիրվի։ Ծայրահեղ դեպքում, յերբ անհնար է գտնել չոր տեղ, անհրաժեշտ է նախորոք խոնավ վայրերը վորոշ միջոցներով չորացնել։ Այսպիսով, ուրեմն, դպրոցական շենքի դիրքը վորոշելու համար պետք է նկատի առնել տեղական բոլոր պայմանները և հատկացնել դպրոցին ընտիր տեղ, ղեկավարվելով վերը հիշված սկզբունքներով։

46940 - ...

3. Կլիմայական պայմանները.— Կառուցվելիք դպրոցական շենքը պետք է դասավորել ըստ տեղական կլիմայական և առողջապահական պայմանների։ Դասարանները պետք է համարեցվեն այնպես, վոր նայեն դեպի հարավային, հարավ-արևելյան, հարավ-արևմտյան, արևելյան կամ արևմտյան կողմերը։ Դասարանի պատուհանները վոչ մի դեպքում չպետք է նայեն հյուսիսային կողմը։

Դասավորության ժամանակ խիստ ուշադրություն պետք է դարձնել քամիների հոսանքների ուղղության վրա։ Դռներն ու լուսամուտները չպետք է նայեն ուժեղ քամիների կողմը։

4. Շենքին հատկացվելիք հողամասի տարածությունը.— Տեղի տարածությունը պետք է լինի այնչափ, վոր տեղավորվի վոչ միայն դպրոցական շենքը, այլ և ապագայում կառուցվելիք օժանդակ տնտեսական շենքերը։ Բացի այդ, անհրաժեշտ է ունենալ համապատասխան բակ, պարտեզ, բանջարանոց, մարզանքների հրապարակ, և այլն։ Զատ ցանկալի յե, վոր դեկրետով հատկացվելիք 5 դես. հողամասը դպրոցին կից կամ նրան շատ մոտիկ լինի, վորով հնարավորություն կ'ստեղծվի կազմակերպել փորձնական աշխատանքներ։ Դպրոցի բակում անհրաժեշտ է ծառեր տնկել, սակայն այն կարգով, վոր նրանք չ'խանգարեն դասարանների լուսավորությանը։

Վորպեսզի հողամասը բավարարի վերոհիշյալ բոլոր պահանջներին, անհրաժեշտ է, վոր դպրոցին հատկացված տարածությունը լինի վոչ պակաս, քան 2 դես. և միայն ծայրահեղ դեպքում՝ 1 դեսյատին։

5. Կառուցվելիք դպրոցական շենքերի նյութը։— Վորպեսզի գյուղդպրոցական շենքը որինակ դառնա գյուղական շինարարությանը, անհրաժեշտ է, վոր կառուցվի տեղական շինարարական նյութերից և, հնարավորության սահմաններում, մատչելի գներով։ Կառուցվելիք շենքերի նյութը պետք է լինի տեղում գտնվող շինարարական նյութերից - մեր պայմաններում՝ գլխավորապես քարից։ Այն վայրերում, վորտեղ քարը սակավ է, անհրաժեշտ է հիմքը և հիմքից մինչև հատակը (цоколь) կառուցել քարից, իսկ պատերը շարել հում, կամ ավելի լավ է, թրծած աղյուսից։

Նկատի պետք է առնել, վոր նոր կառուցվելիք դպրոցական շենքն ընդունելով իբրեվ գյուղի որինակելի և կենտրոնական հիմնարկ, կառուցվում է վոչ թե հինգ-, տասն տարի ժամանակով օգտագործելու, այլ տասնյակ տարիների ընթացքում իր առաջ դրված պահանջները բավարարելու համար. ուստի անհրաժեշտ է՝

Ա. Հիմքը և պատերը շարել կրաշաղախով.

Բ. Շենքի ճակատը - դեմքը ցանկալի յե շարել սրբատաշ հատով քարից - ըստ նախագծերի, իսկ այն վայրերում, վորտեղ հատով քարի մատակարարումը դյուրին է ու մատչելի, ավելի նպատակահարմար է շենքի բոլոր պատերը շարել հատով քարից։ Յերբ սրբատաշ և հատով քարի արժեքների մեջ փոքրիկ տարբերություն լինի, դարձյալ նպատակահարմար է գործադրել հատով քարը, վորովհետև նրա շարվածքի համար պահանջվում է ավելի քիչ կրաշաղախ, իսկ կրաշաղախի արժողությունն ավելի թանգ է, քան քարերի տեսակների գների տարբերությունը։

Գ. Հիմքի խորությունը վորոշվում է տեղերում, ի նկատի ունենալով տեղական կլիմայական պայմաններն ու կարծրահողը (грунт)։ Միջին խորությունը պետք է լինի 1½-2 արշին։

Դ. Հատակի բարձրությունը գետնից (цоколь) պետք է լինի 1կ մինչև 1½ արշ.

Ե. Հիմքը և հիմքից բարձր, մինչև հատակը (цоколь), շարվում է լեռ կամ նման, խոնավություն չընդունող, քարից. ցանկալի յե ցոկոլի յերեսը (облицовка цоколя) շարել լեռ հատով քարից։

Զ. Հատակների գերանները պետք է ունենան 5-6 վ. հաստություն (յերբ կլոր են), բայց ավելի նպատակահարմար է գերանները դարձնել քառակուսի (брусья) 5-6 վերշոկ բարձրությամբ և 3-4 վերշոկ հաստությամբ - դասավորելով քարե սյուների վրա։

Է. Նախ քան մաքուր հատակը խփելը, անհրաժեշտ է դասավորված գերանների տակի կողերին խփել քառակուսի 1¼ վերշ. x 1¼ վրշ. փայտեր և այդպիսիների վրա դասավորել փուշտա կամ վոչ պակաս, քան 1" հաստություն ունեցող տախտակ, ապա վրայից կավաշաղախով (դարմանախառն) սվաղել 1 վերշոկ հաստությամբ և, ըստ հնարավորության, սվաղի վրա ավազ ցանել։

Ը. Հատակները տախտակամածել վոչ պակաս քան 1 վերշ. հաստություն ունեցող տախտակներով, տախտակները, նախ քան մեխերով ամրացնելը, միացնել իրար հետ շպերով։

Թ. Առաստաղի գերաններն ևս նպատակահարմար է

դարձնել քառ. սկուտի 3 վրշ × 6 վրշ. չոր փայտից, վորպեսզի չ՚ծռվեն: Գերանների ծայրերը պետք է անցնեն պատերի վրա առնվազն 6 վերշոկ:

Ժ. Առաստաղի գերանների վրա պետք է դասավորել 1" վոչ պակաս հաստություն ունեցող տախտակներ կամ փուշտա, վրայից ծածկել ձեղեգով ու բելուծով, վորից հետո ծածկել հողով ու սվաղել կավաշաղախով 1 վերշոկ հաստությամբ:

ԺԱ. Տանիքը կարելի յե ծածկել թիթեղով, կղմինդրով, կամ, ծայրահեղ դեպքում, ժամանակավորապես (մինչեվ նյութական հնարավորություն ստեղծվելը) թողնել հարթ այն պայմանով, վոր յերկու կողմի վրա հողածածքը թեքություն ունենա, ջուր հոսալու համար: Բայց և այնպես ապագայում ավելորդ ծախսեր չ՚կատարելու համար նպատակահարմար յեվ ցանկալի յե շենքը կառուցելու ընթացքում անմիջապես տանիքը ծածկել թիթեղով կամ կղմինդրով:

ԺԲ. Առաստաղը կարելի յե տախտակամածել ½"–1" հաստություն ունեցող տախտակներով և ներկել սպիտակ գույնի յուղաներկով, կամ գերաններին խփել բաղդադկաներ ու վրայից սվաղել գաջով կամ կրաշաղախով:

ԺԳ. Դասարանի և այլ սենյակների պատերը սվաղում են գաջով կամ կրաշաղախով, ապա սպիտակացվում կավիճով-սոսնձախառն կամ կրի լուծվածքով: Հատակն ու պատերը կառնիզով իրար միացնելուց պետք է խուսափել, վորը նպաստում է փոշու կուտակմանը, և դրա փոխարեն միացումը կատարել կլորացված-առանց կառնիզների:

ԺԴ. Պատուհաններ - լուսամուտներ.— Լուսամուտները պետք է դասավորվեն դասարանի յերկարությամբ, այնպես, վոր նրանց լուսավորող տարածությունը համապատասխանի հատակի մակերեսի 1/5-ին: Այսպիսով, յեթե դասարանի մակերեսը 12 արշ × 8 արշ = 96 քառ. արշին է, ապա լուսամուտների լուսավորող մակերեսը պետք է լինի $\frac{96,0}{5}$ = 19,2 քառ. արշ., կամ, վորովհետեվ դասարանն ունի յերեք լուսամուտ, յուրաքանչյուր լուսամուտի լուսավորող մակերեսը լինելու յե 19,2 քառ. արշ.: 3 = 6,4 քառ. արշին, վորի վրա պետք է ավելացնել 0,6 քառ. արշին. լուսամուտի շրջանակի և փեղկերի փայտի մասերի զբաղեցրած տարածությունը: Ուրեմն, դասարանի լուսամուտների ընդհանուր մակերեսը՝ 6,4 ք. արշ + 0,6 ք. արշ = 7,0 ք. արշ., × 3 լուս. = 21,0 ք. արշ.: Հետեվապես, վորպեսզի ունենանք 21,0 քառ. արշին լուսամուտների մակերես, անհրաժեշտ է լուսամուտների համար ընդունել հետեվյալ չափերը՝ բարձրություն — 3,5 արշ., լայնություն — 2,0 արշ., վորպիսի չափերն ընդունված են կցված նախագծերում: Դասասենյակի յերեք լուսամուտի մեկի փեղկում անհրաժեշտ է ունենալ օդանցք (форточка):

ԺԵ. Դռներ.— Ներսի դռների չափերը պետք է լինեն 3,5 արշ × 1,75 արշ. և մուտքի դռների չափերը՝ 4,5 արշ. × 2 արշ., ինչպես նախատեսված է նախագծերում:

ԺԶ. Պահարաններ.— Հայտնի յե, վոր ամեն մի դասարանում պետք է լինի մեկ կամ յերկու պահարան, բայց վորովհետեվ պահարանները զբաղեցնում են վորոշ տարածություն դասասենյակում, վորի համար նախագծերի մեջ վերցրած են ամենամինիմալ չափերը, ուստի անհրաժեշտ է պատի մեջ, քարի շարվածքի ժամանակ, պահարանի համար թողնել համապատասխան տեղ, ապա շրջանակներ ու դռներ հարմարեցնելով, պատրաստել պահարաններ պատերի մեջ, վորով վոչ միայն կ՚շահենք տարածության մեջ, այլ և նյութապես, վորովհետեվ առանձին փայտյա պահարանները շատ ավելի ծախսերի հետ են կապված, քան մեր առաջարկած պատի պահարանները: Նախագծերում ընդունված է վերջին ձեվը:

ԺԷ. Ջերմություն.— Դասարանները տաքացնելու համար նպատակահարմար է ունենալ պատի „գերմետիկ", վառարաններ: Վերջինների ծխնելույզներին հարակից ցանկալի յե ունենալ օդանցք:

ԺԸ. „Բեկրեսթյոն" միջանցք.— Ինչպես յերեվում է հատակագծերից (բացի յոթնամյա դպրոցի շենքի նախագծից), ծրագրված է բավականին լայն և ընդարձակ բեկրեսթյոն միջանցք, վոր վոչ միայն ծառայելու յե իբրեվ խաղատեղի դասամիջոցներին, այլ և վորպես դահլիճ ներկայացումների և գյուղական ժողովների համար:

ԺԹ. Դպրոցի վարիչի բնակարան.— Չ՚նայած 1923 թ. Լուսժողկոմատի նշանակած հանձնաժողովը վորոշել էր դպրոցի շենքում բնակարան չունենալ ուսուցչի կամ վարիչի համար, այնուամենայնիվ 1925 թվին, վերաքննելով նախկին վորոշումը, Լուսժողկոմատը յեկավ այն յեզրակացության, վոր դպրոցի շենքում պետք է ունենալ վարիչի համար բնակարան ելեմենտար հարմարություններով. և առանձին մուտքով: Հիմնվելով այդ տեսակետի վրա, կազմված են կցված նախագծերը:

Ի. Արտաքնոցներ.— Ի նկատի ունենալով մեր պայմանները, արտաքնոցները չ՚պետք է շինել դպրոցի շենքում, այլ պետք է կառուցել առանձին — բակում:

—

## Խրճիթ-ընթերցարան և ժողովրդական տուն:

Խրճիթ-ընթերցարանի շենքը կառուցելիս պետք է հաշվի առնել վերոհիշյալ բոլոր պայմանները, վորովհետեվ խրճիթ-ընթերցարանն իր բարեկեցիկ արտաքինով, մաքրությամբ պետք է օրինակելի լինի բոլորի համար՝ գյուղի ընդհանուր կենցաղի և կուլտուրական կյանքի առողջացման ու զարգացման տեսակետից: Հենց դրա համար էլ անհրաժեշտ է, վոր խրճիթ-ընթերցարանը հատուկ շենք ունենա, հարմարեցրած իրեն առաջադրած պահանջներին: Ապագայում, յերբ աշխատանքները լայն ծավալ կ՚ստանան, շրջանային խրճիթ-ընթերցարանը կ՚վերածվի ժողովրդական տան, վորը կ՚ընդգրկի գյուղում տարվելիք կուլտ-կրթական բոլոր աշխատանքներն իրենց ամբողջությամբ:

— • —

## Շենքերի չափերը:

### I Միակոմպլեկտ դպրոցի շենք:

Լուսժողկոմատի տեխնիկական բաժինը նախագիծը կազմելիս աչքի առաջ է ունեցել այն հանգամանքը, վոր ապագայում մի կոմպլեկտանոց դպրոցի շենքն առանց վորյեվե փոփոխության, շարունակելով հնարավոր լինի դարձնել յերկկոմպլեկտանոց: Այդպիսով շենքն սկզբնական շրջանում ունենալու յե՝ 1) մուտք — 2,8" × 1,33", 2) դասարան — 4,0" × 2,67" 3) ուսուցչի բնակարան — 2,67" × 2,0" և 4) պատշգամբ — 2,67" × 3,58": Շենքի ընդհանուր ծավալը հավասար է՝
(3,33" × 4,33" + 3,50 × 1,83" + 3,33 × 2,58") × 2,50 սաժ = 73,5 խոր. սաժ.:

### II. Յերկկոմպլեկտ դպրոցի շենք:

Շենքը կարելի յե կառուցել մեկ, կամ յերկու նվագում, ինչպես նախատեսված է I կետում: Շենքը մի նվագ կառուցվելու հետո ունենալու յե՝ 1) դասարան I — 4,0" × 2,67", 2) դասարան II 4,0" × 2,67", 3) մուտք — 1,33" × 2,83", 4) Գրադարան-ուսուցչանոց — 2,0" × 2,67, 5) բեկրեսթյոն միջանցք — 5,34 × 2,67" և 6) դպրոցի վարիչի բնակարան — 2,67" × 2,0": Շենքի ընդհանուր ծավալը հավասար է՝
(6,33" × 10,49) × 2,50" — — — — — — — — = 166,0 խոր. սաժ.

Բ. Հարկում տեղավորված է՝

1) յերեք դասասենյակ, վորոնց յուրաքանչյուրի չափերը՝ 4,025 × × 2,71" և մեկ դասասենյակի չափը - 4,11 × 2,75", 2) դահլիճ և բեմ – 7,65 × 3,38", 3) թանգարան – 4,11" × 2,715" և 4) մի – ջանցք – 14,94" × 1,02":

Շենքի ընդհանուր ծավալը հավասար է՝ [(3,32 × 4,77") × 2 + (4,00 × 4,72) × 2 + (3,35 × 2,50) + + (1,35 × 8,31)] × 4,67 + [(4,85 × 3,37) × 2 + (1,35 × 1,35) × 2] × × 2,60 + (8,31 × 4,04) × 5,50 ------------ 694,70 խոր. սաժ.

Լուսժողկոմատի [illegible] [signature]

20/III 1927 թ. քաղ. Յերևան.

| Ա. աստ. մեկ կոմպլեկտանոց դպրոցի շենքի չափերը | | | |
|---|---|---|---|
| մեկ կոմպլեկտ, 40 սովորող | | | |
| Լոկալները | չափերը սաժեններով | մակերեսը քառ. սաժեն. | մեկ աշակերտի համ. |
| I դասարան | 4,00 × 2,67 | 10,68 | 0,267 |
| 1 մուտք | 2,83 × 1,33 | 3,78 | — |
| 1 ուսուցչի բնակ. | 2,67 × 2,00 | 5,34 | — |
| 1 պատշգամբ | 3,58 × 2,67 | 9,56 | — |

| Ա. աստ. 2-կկոմպլեկտանոց դպրոցի շենքի չափերը | | | |
|---|---|---|---|
| յերկու կոմպլեկտ, 80 սովորող | | | |
| Լոկալները | չափերը սաժեններով | մակերեսը քառ. սաժեն. | մեկ աշակերտի համ. |
| I դասարան | 4,00 × 2,67 | 10,68 | 0,267 |
| II դասարան | 4,00 × 2,67 | 10,68 | 0,267 |
| 1 մուտք | 2,83 × 1,33 | 3,76 | — |
| 1 ռեկրեացիոն | 5,34 × 2,00 | 124,6. | — |
| 1 գրադ. և ուսուց. | 2,34 × 2,00 | 4,68 | — |
| 1 դպրվարի բնակ. | 2,34 × 2,00 | 4,68 | — |

| Ա. աստիճանի քառակոմպլեկտ դպրոցի շենքի չափեր: | | | |
|---|---|---|---|
| 4 կոմպլեկտ, 160 սովորող: | | | |
| Լոկալները | չափերը սաժեններով | մակերեսը քառ. սաժ. | մեկ աշակերտի համ. |
| I դասարան | 4,00 × 2,66 | 10,64 | 0,266 |
| II դասարան | 4,00 × 2,66 | 10,64 | 0,266 |
| III դասարան | 4,00 × 2,66 | 10,64 | 0,266 |
| IV դասարան | 4,00 × 2,66 | 10,64 | 0,266 |
| 1 մուտք | 2,83 × 1,34 | 3,80 | — |
| 1 գրադարան, թանգարան, ուսուցչանոց | 3,00 × 2,66 | 7,98 | — |
| Ռեկրեացիոն, միջանցք և [illegible] | 9,84 × 2,34 | 23,02 | |
| Դպրվարի բնակարան. | | | |
| 1 սենյակ | 2,66 × 2,00 | 5,32 | — |
| 1 խոհանոց | 1,5 × 0,92 | 1,38 | — |
| 1 մուտք | 1,06 × 0,92 | 0,98 | — |

| Յոթնամյա դպրոցի յերկհարկանի կրթ. շենքի չափերը | | | |
|---|---|---|---|
| 7 կոմպլեկտ, 280 սովորող | | | |
| Լոկալները | չափերը սաժեններով | մակերեսը քառ. սաժ. | մեկ աշակերտի համ. |
| I դասարան | 4,00 × 2,67 | 10,68 | 0,267 |
| II դասարան | 4,07 × 2,67 | 10,86 | 0,271 |
| III դասարան | 4,00 × 2,67 | 10,68 | 0,267 |
| IV դասարան | 4,07 × 2,67 | 10,86 | 0,271 |
| V դասարան | 4,025 × 2,71 | 10,90 | 0,272 |
| VI դասարան | 4,11 × 2,715 | 11,16 | 0,280 |
| VII դասարան | 4,025 × 2,71 | 10,90 | 0,272 |
| Լաբորատորիա | 3,00 × 2,67 | 8,01 | — |
| Կաբինետ | 1,40 × 2,67 | 3,75 | — |
| Թանգարան | 4,11 × 2,715 | 11,16 | — |
| Ուսուցչանոց | 2,67 × 3,34 | 8,92 | — |
| Մուտք-վեստիբյուլ | 1,77 × 3,34 | 5,91 | — |
| Հանդերձարան | 1,40 × 3,34 | 3,68 | — |
| Սպաս. սենյակ | 1,17 × 2,07 | 2,42 | — |
| Արտաքնոց (ջրատ) | 1,17 × 1,17 | 1,37 | — |
| Միջանցքներ | 14,91 × 1,00 | 14,91 | — |
| | 14,99 × 1,02 | 15,29 | — |
| Դահլիճ-բեմ | 7,65 × 3,38 | 25,86 | — |
| Նախասենյակներ | 1,0 × 1,0 | 1,0 | — |
| | 1,0 × 1,0 | 1,0 | — |
| Սանդուղք | 1,8 × 3,0 | 5,40 | — |
| Ուսուցչի բնակարան | | | |
| Նախասենյակ | 0,5 × 1,30 | 0,65 | — |
| սենյակ | 2,07 × 1,30 | 2,69 | — |
| սենյակ | 2,00 × 2,67 | 5,34 | — |
| խոհանոց | 1,0 × 1,57 | 1,57 | — |
| Մուտք | 1,0 × 1,0 | 1,0 | — |

Գծագիր № 2.

Գծագիր № 1.

# Ա ԱՍՑ. ՄԻԱԿՈՄՊԼԵԿՑ ԱՅԽ. ԴՊ. ՑԻՊ. ՇԵՆՔԻ




Նախագիծը կազմեց
ԼԿԺ.-ի տեխ.-ստաժոր

Գծագիր N 2.

# Ա. ԱՍՏ. ՄԻԱԿՈՄՊԼԵԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՏԻՊ. ՇԵՆՔԻ

Տեսք Ա-Բ գծով

Տեսք Բ-Գ գծով




Նախագիծը կազմեց

Ճ.Կ.-ր Տեխ. Տեռոող

1926 թ.

*Գծագիր N 3.*

# Ա. ԱՍՏ. ԵՐԿԿՈՄՊԼԵԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐ. ՏԻՊ. ՇԵՆՔ

Հատակագիծ




Կտրած Ա-Բ գծով




Նախագիծը կազմեց
ՀԺԿ-ի տեխ. տեսուչ

Գծագիր N 4.

# Ա. ԱՍՏ. ԵՐԿԿՈՄՊԼԵԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՏԻՊ. ՇԵՆՔ




Նախագիծը կազմեց

1926 թ.

# Ա. ԱՍՏ. ՔԱՌԱԿՈՄՊԼԵԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՏԻՊ. ՇԵՆՔ

Գծագիր № 5.



Ա. ԱՍՏ. ՔԱՌԱԿՈՄՊԼԵԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՏԻՊ. ՇԵՆՔ

Գծվածք N6.

Ֆասադ




Նախագիծը կազմեց
Հ. Ժ. Կ.-ի տեխ. տեսուչ [signature]

1926թ.

Ա. ԱՍՏ. ՃԱՌԱԿՈՄՊԼԵԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՏԻՊ. ՇԵՆՔ

Գծագիր №7

Կտրված Գ-Դ գծով




Նախագծեց. Յով. Տէր

Լ.Ժ.Կ.-ի Տեխ. Բաժ. Ճարտարապետ

1926թ.

րԴ. ՅԵՆՔ

Տեսք Բ-Գ գծով



Նախագիծը կազմեց
ՀԺԿ-ի տեխ. տեսուչ

192[illegible]թ.

# ՍՏՈՐԻՆ ՏԻՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԴՊՐՈՑԻ ՇԵՆ



…ՍՏՈՐԻՆ ՏԻՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔ

Գծագիր № 8.





1926 թ.

# ՍՏՈՐԻՆ ՏԻՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ

Տեսք Բ-Գ գծով



## ...ՐԻՆ ՏԻՊԻ ԳՅՈՒՂԱՏՆԵՑ. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ

Տեսք Բ-Գ գծով



Նախագիծը կազմեց
ՀՍԽՀ-ի Տեխն. Տեսուչ

1926 թ.

ՍՏՈՐԻՆ ՏԻՊԻ ԳՅՈՒՂԱՑՆԵ. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ

Տեսք Գ-Դ գծով




Նախագիծը կազմեց
Ճ.կ.-ի տեխ. տեսուչ [signature]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԺՈՂՈՎՐԴԱԿ ՏԱՆ ՏԻՊ. ՅԵՆՔ

հատակագիծ




կտրվածք № 2 գծով



Մասշտաբներ




Նախագիծը կազմեց
ճարտ. ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐ. ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԺՈՂՈՎՐ
ՏԱՆ ՏԻՊ. ՇԵՆՔ




կտրված N2 գծով




Նախագծի կա…
ՀՃԿ-ի տեխ…
1926թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐ. ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ

Տեսք Ա-Բ գծով



ԳԱՎԱՌ. ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

կտրված № 3 գծով



ՏԱՆ ՏԻՊ. ՅԵՆՔ



ՅՈԹՆԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ ՅԵՐԿՀԱՐԿԱՆԻ ՏԻՊԱԿԱՆ ՇԵՆՔ.—

Գծանկար № 16.

Ա. հարկի հատակագիծը




Նախագիծը կազմեցին

Ճարտարապետ-գեղարվեստագետ Ն. Բունիաթյան

1927 թ.

Տեխնիկ [signature]

Գծագիր № 17

# ՅՈԹՆԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ՏԻՊ. ՇԵՆՔ

Բ հարկի հատակագիծ






Նախագիծը կազմեցին
Ճարտարապետ-գեղարվեստագետ Ն. Բունիաթյան
Տեխնիկ [signature]

1927 թ.

# ՅՈԹՆԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ ՑԵՐԿՆԱՐԿԱՆԻ ՏԻՊ. ՇԵՆՔ



նախագիծը կազմեցին
ճարտարապետ-գեղարվեստագետ Ն. Բունիաթյան.
տեխնիկ

1927 թ.

Յերեվան

568

ՀՀ Ազգային գրադարան
NL0009655